Համազասպ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ԴՐԱՄՆԵՐԻ ԳԱՆՁ ՀԱՅԿԱՎԱՆԻՑ

Շիրակի տարածքում բացի հնագիտական պեղումներով հայտնաբերված դրամներից, կան նաև դրամական գանձերի պատահական գտածոներ: 1980թ. Հայկավան գյուղի «Կավնոց» կոչվող դաշտը վարելու ժամանակ գութանի խոփը դուրս է բերում մետաղադրամներով լցված մի փոքրիկ կավանոթ: Հայկավանը գտնվում է Գյումրուց 10 կմ հյուսիս-արևմուտք:Գյուղի տարածքում կան վաղ բրոնզի շրջանի բնակավայր, ուշ բրոնզի դամբարանադաշտ, անտիկ և միջնադարյան բնակատեղիներ: Ժամանակակից գյուղի հարավարևելյան մասը նստած է միջնադարյան բնակավայրի վրա: Գանձը, որ կազմված է 195 մոնղոլական դրամներից, 1980թ. գտել է Վրույր Հլղաթյանը, իսկ 1982թ. որդին՝ Արշավիր Հլղաթյանը, կավանոթի հետ միասին այն հանձնել է Շիրակի երկրագիտական թանգարան: Սա Շիրակում հայտնաբերված ամենախոշոր դրամական գանձերից մեկն է (նկ.1): Դրամները XIIIդ. երկրորդ կեսում կտրվել են Հուլաղույան հետևյալ խաների կողմից.

1. Աբաղա իբն Հուլաղու (1265-1282թթ.), 25 դիրհեմներ
2. Ահմադ իբն Հուլաղու (1282-1284թթ.), 1 դիրհեմ
3. Արղուն իբն Աբաղա (1284-1291թթ.), 160 դիրհեմներ
4. Քեյխաթու իբն Աբաղա (1291-1295թ.թ.), 9 դիրհեմներ

Արղուն խանի դրամներից 64-ը ունեն քրիստոնեական խորհրդանիշեր՝ խաչեր (նկ.2):[1]

Գանձի կուտակման և այն թաքցնելու հավանական ժամանակաշրջանը պարզելու համար անհրաժեշտ է անդրադառնալ տվյալ ժամանակահատվածի պատմական իրադարձություններին: Արղուն խանի դրամների վրա քրիստոնեական խորհրդանիշի արտացոլումը և քրիստոնյաների նկատմամբ նրա բարյացակամությունն ուներ քաղաքական և տնտեսական դրդապատճառներ: Իր հակառակորդների դեմ մղած պայքարում նա հիմնականում հենվում էր տեղական, այդ թվում նաև՝ հայ-վրացական ֆեոդալական ուժերի վրա: Նա ձգտում էր քրիստոնեության գործոնն օգտագործել նաև Եվրոպայի և Հռոմի պապի հետ իր արտաքին դիվանագիտական հարաբերություններում՝ դաշնակցելու նրանց հետ ընդհանուր թշնամու՝ Եգիպտոսի մամլուքների դեմ համատեղ պայքարում: Քրիստոնեության նկատմամբ Արղուն խանի քաղաքականությունը ժամանակի հայ ֆեոդալների միջավայրում առաջ է բերում նույնիսկ որոշ ազատագրական պատրանքներ:

Արղունին 1291թ. հաջորդեց եղբայրը՝ Քեյդաթուն, պետության կառավարման գործում բավականին անզոր մի մարդ: Պետական պաշտոնյաների կողմից կամայականությունները և չարաշահումները հասել էին աննախադեպ չափերի: Գանձարանը դատարկ էր, երկիրն ապրում էր տնտեսական և քաղաքական անկում: 1294թ. ստեղծված դրամական ճգնաժամից դուրս գալու նպատակով Քեյդաթուն կատարում է դրամական ռեֆորմ և արծաթադրամների փոխարեն շրջանառության մեջ է մտցնում թղթադրամներ: Սակայն հանդիպելով ժողովրդի սուր դիմադրությանը՝ կարճ ժամանակ հետո դրանք հանվում են շրջանառությունից: 1295 թվականին Քեյդաթուն դավադրության զոհ է դառնում, և գահն անցնում է Հուլաղուի թոռ Բայդուին: Սակայն վերջինիս հաջողվում է իշխել ընդամենը վեց ամիս և Արղուն խանի որդի Ղազանը, հանդես գալով իբրև օրինական ժառանգ, դաժան հաշվեհարդար տեսնելով հակառակորդների հետ, վերցնում է իշխանությունը (1295-1304թթ.): Ղազանն ընդունում է մահմեդականություն և այն հայտարարում պետական կրոն: Նա գլխավոր ամիրա է նշանակում Նովրուզին, որը սատարել էր նրան գահակալական պայքարում: Ձեռք բերելով համարյա անսահմանափակ իշխանություն՝ Նովրուզը վերսկսում է քալանը և հալածանքները քրիստոնյաների նկատմամբ: Որոշ ժամանակ անց նա գահին տիրելու նպատակով փորձում է դավադրություն կազմակերպել, որը բացահայտվում է, և նրա տոհմն ամբողջովին ոչնչացվում է: Ներքին և արտաքին թշնամիներից ապահովելով իր երկրի անվտանգությունը՝ Ղազան խանը ձեռնամուխ է լինում երկիրը տնտեսական ճգնաժամից դուրս

---

[1] Դրամների բնորոշումը կատարել են դրամագետներ Ա.Զոհրաբյանը,Ժ.Դեպեյրոսը և Ս.Բրեսքը:

բերելու միջոցառումների: Պահպանվել են նրա բարենորոգչական 40 հրովարտակ-միջոցառումները, որոնք վերաբերում են քաղաքական և տնտեսական կյանքի հիմնական՝ հողային, ֆինանսական, հարկային, վարչական և ռազմական բնագավառներին: Թեթևացվում կամ վերացվում են որոշ հարկեր և տուրքեր, կրճատվում են պետական ծախսերը, հաստատվում են նահանգներից գանձվող հարկերի միասնական կայուն չափեր: Երկրի տարածքում սահմանվում են դրամական, չափի ու կշռի միասնական միավորներ: Մեծ չափերի հասնող վաշխառուությունը սահմանափակելու նպատակով նա հատուկ հրամանով արգելեց այն, իսկ պարտապաններին ազատեց վերցրած գումարները և դրանց տոկոսները վերադարձնելու պարտավորությունից: Ձեռնարկվում են միջոցառումներ արհեստներն ու առևտուրը խրախուսելու համար: Ղազան խանի և նրա հետնորդների ձեռնարկած միջոցառումները փոքր-ինչ բարելավեցին վիճակը, սակայն չկասեցրին տնտեսական կյանքի անկման ընթացքը: Քաղաքական և տնտեսական համեմատաբար կայուն իրավիճակը պահպանվում է մինչև XIVդ. 20-ական թթ.:

Հայկավանի գանձի ժամանակագրական վերին սահմանը 1293-1294 թվականներն են, քանի որ 1294թ. արդեն արծաթի պակասության պատճառով ստեղծված ճգնաժամային իրավիճակում փորձ արվեց շրջանառության մեջ մտցնել թղթադրամներ: Հնարավոր է, որ գանձը թաքցված լինի հենց այս ժամանակ, ունեցած արծաթը թղթադրամով փոխանակելուց խուսափելու նպատակով: Այն կարող էր թաքցվել նաև 1295-1297թթ.՝ գահակալական կռիվների շրջանում, երբ Ղազան խանի իշխանության առաջին տարիներին Նովրուզը վերսկսել էր քրիստոնյաների թալանն ու հալածանքները: Խանի բարենորոգչությունների սկսվելուց հետո գանձի թաքուստը քիչ հավանական է, իսկ ավելի ուշ շրջան ենթադրելու հիմքերը բացակայում են, քանի որ գանձի մեջ չկան Քեյդաթուին հաջորդած խանների դրամներ: Բացի այդ, քրիստոնեական խորհրդանիշերով դրամները մոնղոլների կողմից իսլամը պետական կրոն ընդունելուց հետո չէին կարող մնալ շրջանառության մեջ: Գանձն ամենայն հավանականությամբ կուտակվել է տարիների ընթացքում և թաքցվել XIIIդ. վերջերին: Նույն թվագրությունն ունի նաև կավանոթը:



КЛАД МОНГОЛЬСКИХ МОНЕТ ИЗ АЙКАВАНА

____ *Резюме* ____ ____ *А. Хачатрян* ____

В 1980 году житель села Айкаван А. Хлгатян сдал в краеведческий музей Ширака денежный клад, найденный во время сельскохозяйственных работ и состоявший из 195 монгольских серебряных монет чеканки второй половины XIII века, принадлежавших монгольским ханам Гулавуйской династии. Серебряные монеты отчеканены монгольскими ханами Гулавуйской династии между 1265-1295гг.

64 монеты Аргун хана имеют христианскую символику-крест. Анализируя политическую и экономическую ситуацию данного периода, можно установить, что клад был зарыт между 1295-1297гг., так как в 1294г., из-за разоренной экономики и нехватки в казне серебра, была попытка внедрения бумажных денег вместо серебряных. Кроме того в 1295г. Хазан хан объявил ислам государственной религией. Разумеется, после этого монеты с христианской символикой должны были выйти из обращения и, несмотря на благоприятную овстановку, созданную ханом в дальнейшем для подъема хозяйства и торговли, были зарыты в землю.